ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ՝
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ

1.	e-draft.am Տիգրան Պետրոսյան 25.03.2022 23:03:42	32-րդ կետում՝ չճշտված, ոչ թե տեղեկատվության տրամադրումը, այլ՝ տեղեկությունների տրամադրումը, կամ պարզապես տեղեկատվությունը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		35-րդ կետում՝ պաշտոնական:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		37-րդ կետում՝ միջոցներն:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		38-րդ կետում՝ վերջակետը երկու անգամ է դրված:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		39-րդ կետում՝ չխոչընդոտել, հանրային այլ ծառայողների:	Ընդունվել է մասամբ	Հաշվի առնելով, որ «հանրային ծառայող» եզրույթն օրենքով սահմանված հասկացություն է, քերականական տեսանկյունից առավել ճշգրիտ է «այլ հանրային ծառայող» ձևակերպումը:
		41-րդ կետում՝ ավելացնել բացառություններ, որոնց մեջ կներառվի օրինակ ինքնապաշտպանությունը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		53-րդ կետում՝ երևի ավելի ճիշտ կլիներ՝ (...) որոնց իրականացման ընթացքում հաճախակի կհայտնվեն շահերի բախման իրավիճակներում:	Չի ընդունվել	«Կանխատեսելի իրավիճակներ» ձևակերպումը ենթադրում է հնարավոր շահերի բախման դեպքեր:

		54-րդ կետում՝ պաշտոնեական:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		55-րդ կետում՝ Հանրային ծառայողը պարտավոր է մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկ ընդունելու դեպքում իր վերադասին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով անմիջապես գրավոր իրազեկել:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		57-րդ կետի վերջին նախադասությունում՝ պարզ չէ սոցիալապես ընդունելի սահմաններում-ը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		60-րդ կետում՝ ստացվում է, որ ընդհանրապես այդպիսի նվեր ստանալու իրավունք չունի:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		63-րդ կետում՝ ի թիվս այլնի:	Չի ընդունվել	Ներկայացված առաջարկն անորոշ է:
		64-րդ կետում՝ հանրային այլ ծառայողների:	Չի ընդունվել	Հաշվի առնելով, որ «հանրային ծառայող» եզրույթն օրենքով սահմանված հասկացություն է, քերականական տեսանկյունից առավել ճշգրիտ է «այլ հանրային ծառայող» ձևակերպումը:
		68-րդ կետում՝ տեղեկատվության փոխարեն տեղեկությունները:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		69-րդ կետում՝ Հանրային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելու համար ոչ անհրաժեշտ՝ գաղտնի պաշտոնական տվյալներին, տեղեկություններին, գաղտնաբառերին, հատուկ ռեժիմով պահպանվող տարածքներին, հասանելիություն ստանալու նպատակով քայլեր	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		չկատարել, ինչպես նաև առանց թույլտվության չպատճենահանել կամ չձայնագրել, չլուսանկարել և տեսագրել այդ տեղեկությունները:		
		71-րդ կետում՝ (...) դրա հետ կապված հարցադրումները կատարել առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		78-րդ կետում՝ առաջարկում եմ ավելացնել, որ նման տեղեկություններ ունենալու դեպքում որևէ կերպ չբացահայտել հաղորդում տված անձի ինքնությունը:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կարգավորման շրջանակից դուրս է նման դրույթի սահմանումը: Նման կարգավորումները ենթակա են սահմանման օրենսդրական մակարդակում:
		91-րդ կետում՝ համար-ի փոխարեն դեպքում:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		96-րդ կետում ավել սիմվոլներ կան:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		97-րդ կետում՝ հանրային մյուս ծառայողների:	Չի ընդունվել	Հաշվի առնելով, որ «հանրային ծառայող» եզրույթն օրենքով սահմանված հասկացություն է, քերականական տեսանկյունից առավել ճշգրիտ է «մյուս հանրային ծառայողներ» ձևակերպումը:
		101-րդ կետում՝ նույնը:	Չի ընդունվել	Հաշվի առնելով, որ «հանրային ծառայող» եզրույթն օրենքով սահմանված հասկացություն է, քերականական տեսանկյունից առավել

				ճշգրիտ է «մյուս հանրային ծառայողներ» ձևակերպումը:
		107-րդ կետում՝ խախտման համար:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
2.	e-draft.am Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային հանրապետական արհմիություն 30.03.2022 14:51:38	Կանոնների նախագծի 5-րդ կետը սահմանում է, որ Տիպային կանոնները հիմք են համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման՝ ելնելով ծառայության յուրաքանչյուր առանձին տեսակի ծառայողական առանձնահատկություններից: Սակայն հենց տիպային կանոններում այդ առանձնահատկությունները հաշվի առնված չեն: Փորձը ցույց է տալիս, որ համապատասխան մարմիններն իրենց կանոնները մշակելուց սովորաբար ամբողջապես օգտագործում են տիպային կանոնները: Այդ պատճառով, առաջարկում ենք, որպեսզի որոշակի տարբերակումներ մտցվեն, թե կանոնների կետերը ո՞ր կատեգորիայի հանրային ծառայողներին են վերաբերում: Մյուս կողմից, տիպային կանոնների 6-րդ կետը հակասում է 5-րդ կետին, և սահմանում է, որ դրանցով պետք է առաջնորդվեն հանրային ծառայողները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից: Այնինչ, հանրային ծառայողներ են ինչպես պետական ծառայողները, այնպես էլ համայնքային ծառայողները և հանրային	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները ուղենիշային են ոլորտային կանոնագրքերի համար: Առանձին տեսակի ծառայությունները սույն կանոնների հիման վրա կկարգավորեն իրենց ոլորտային առանձնահատկությունները: Առաջարկի հիմքում դրված ձևակերպումները հստակ չեն:

		այլ պաշտոններ զբաղեցնողները, սակայն կանոնների դրույթների մեծ մասը հաշվի չի առնում հանրային ծառայողների լայն շրջանակը: Առաջարկում ենք 6-րդ կետը հանել ընդհանրապես:		
		11 կետի 1-ին մասով «Նվեր» հասկացության սահմանումն արդեն տրված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Չնայած համարում ենք այն բարդ, այնպիսին, որ կարող է տեղիք տալ տարաբնույթ մեկնաբանությունների, այնուամենայնիվ անիմաստ ենք համարում Օրենքի հոդվածը տեղափոխել կանոնների մեջ: Առաջարկում ենք նվերի սահմանումը հանել, իսկ նվեր ստանալը կարգավորել «Նվերների ընդունման արգելք» բաժնով:	Ընդունվել է մասամբ	«Նվեր» եզրույթը համապատասխանեցված է «Հանրային ծառայության մասին» օրենքին: Օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, որ «Բարեվարքության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը:Հաշվի առնելով այս կարգավորումը՝ ներների ընդունման արգելքը նպատակահարմար է կիրառել նաև Տիպային կանոններում:
		11-րդ կետի 5-րդ մասը մի կողմից սահմանում է, որ հանրային շահը դա սահմանադրական արժեք է, իսկ մյուս կողմից այն գերադասվում է	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում,

		սահմանադրությամբ տրված հիմնական իրավունքներին: Սահմանադրությամբ սահմանված բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման հնարավորություններն են հենց հանդիսանում հանրային շահ, և չի կարող հանրային շահի պաշտպանության պատրվակով սահմանափակվել սահմանադրությամբ տրված հիմնարար իրավունքները: Առաջարկում ենք սահմանումը վերաձևակերպել:		մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:
		11-րդ կետի 6-րդ մասը նույնպես առաջարկվում է հանել, քանի որ հանրային ծառայության պաշտոնը սահմանված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:https://brisk-cms.e-draft.am/project/edit?id=4098

		14-րդ կետով սահմանված «ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանշի մեծարումը» սուբյեկտիվ ընկալման տեղիք կարող է տալ: Առաջարկում ենք հստակեցնել, թե որ գործողությունն է համարվում մեծարում, և որ վայրում չի կարելի մեծարել: Օրինակ, հանրային ծառայողի աշխատասենյակում իր ընտանիքի լուսանկարներ տեղադրելը արդյո՞ք մեծարում է, թե ոչ: Կամ հանրային ծառայողը իր հագուստի կամ մաշկի վրա կրում է որևէ միավորման կամ սպորտային, արհմիութենական, կրոնական կամ այլ համայնքի տարբերանշան, արդյո՞ք սա մեծարում է, թե ոչ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «մեծարում» եզրույթը հանվել է Նախագծից:
		16-րդ կետում օգտագործված «ոչ հարիր», «վարկաբեկող», «հանրության վստահությունը նվազեցնող», «հանրային ծառայողի անկախության նկատմամբ կասկած հարուցող» եզրույթները սուբյեկտիվ ընկալման տեղիք կարող են տալ: Հետևաբար նման եզարույթներ օգտագործելուց հարկավոր է դրանք հստակեցնել:	Չի ընդունվել	Նշված եզրույթները օգտագործվում են տարբեր օրենքներում, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածը սահմանում է. «Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը

				նվազեցնող վարքագիծ դրսևորելուց»: Եզրույթներն օգտագործվում են նաև «Դատախազության մասին» օրենքում և այլ օրենսդրական ակտերում: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		28-րդ կետում նշված «բարեվարքության հարցերով կազմակերպիչ» եզրույթը սահմանված չէ ոչ օրենքով, ոչ էլ կանոններով:	Չի ընդունվել	«Բարեվարքություն հարցերով կազմակերպիչ» եզրույթը սահմանված է և տվյալ ինստիտուտի վերաբերյալ կարգավորումներն ամրագրված են «Հանրային ծառայության մասին օրենքի 46-րդ հոդվածում:
		29-րդ կետում «զուսպ» բառը առաջարկվում է հանել, քանի որ այն հստակ հասկացություն չէ և սուբյեկտիվ ընկալման տեղիք կտա:	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		36-րդ կետում առաջարկում ենք «հայտնել իր ինքնությունը» բառերը փոխարինել «պարտավոր է ներկայանալ՝ հայտնելով անուն-ազգանունը, պաշտոնը և այն մարմինը որը ներկայացնում է» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		38 և 39 կետերում օգտագործված «նրբանկատ» և «զուսպ» բառերը սուբյեկտիվ ընկալման տեղիք են տալիս: Առաջարկում ենք նման արտահայտություններ և բառեր չօգտագործել և	Չի ընդունվել	Դրույթները կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		սահմանափակվել միայն «հարգանք» կամ «հարգել» բառերով:		
		54-րդ կետում «չանել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձի պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնական կարգավիճակի բարելավման և այլ հարցերով, ինչպես նաև չդրդել որևէ մեկին նման երաշխավորություններ տալ կամ միջնորդություններ անել» մասը հիմնավոր չէ: Հնարավոր է, որ հանրային ծառայողը հենց ի պաշտոնե պետք է անի միջնորդություն կամ երաշխավորություն տա: Գուցե նկատի է ունեցվել, որ այդ միջնորդությունները կամ երաշխավորությունները չպետք է լինեն ոչ օբյեկտիվ, սակայն գրվածից այդպես չի հասկացվում:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է երաշխավորություններ տալու իրավասություն անձի կողմից ՈՉ ՕԲՅԵԿՏԻՎ երաշխավորություններ տալուն, ինչպես նաև դրույթով սահմանված այլ գործողություններ կատարելուն: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		55-րդ կետը համարում ենք ավելորդ և առաջարկում ենք հանել: Եթե աշխատանքի անցնելու առաջարկն արդեն ընդունվել է, տրամաբանական է, որ պետք է տեղեկացնի գործատուին իր աշխատանքային պայմանագիրը լուծելու ցանկության մասին:	https://brisk-cms.e-draft.am/project/edit?id=4098 Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և ենթարկվել բովանդակային որոշակի փոփոխության: https://brisk-cms.e-draft.am/project/edit?id=4098
		«Նվերների ընդունման արգելք» բաժնի որոշ դրույթները խնդրահարույց են, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն արդեն սահմանում է, որ հանրային ծառայողների կողմից որոշ նվերների ստանալու դեպքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել	Ընդունվել է ի գիտություն	Զուգահեռ մշակվում է փաթեթ, որի հիման վրա հնարավոր կլինի կիրառել սույն դրույթը: Միաժամանակ, հարկ է նշել, որ «Նվերների ընդունման արգելք» գլխի որոշ դրույթներ ենթարկվել են փոփոխության:

		պետությանը կամ համայնքին: Քանի որ կառավարության կողմից սահմանված կարգի մասին տեղեկությունը բացակայում է, գտնում ենք, որ խնդիրը լուծելու կարիք ունի:		
		59-րդ կետը, որոշակի դեպքերում հակասում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Օրինակ՝ ավագանու անդամը հանրային ծառայող է համարվում, սակայն իր ծառայությունը կատարում է հասարակական կարգով՝ առանց վարձատրության: Միաժամանակ, ավագանու անդամը կարող է լինել աշխատող կամ պետական, կամ ոչ պետական կազմակերպությունում և ստանալ վարձատրություն այդ կազմակերպությունից. հնարավոր են նաև օրենքին չհակասող այլ հնարավորություններ: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը հստակ կարգավորում է, թե ինչ վարձատրվող աշխատանք կարող են կատարել հանրային ծառայողները: Այնպես որ, 59-րդ կետն ավելորդ ենք համարում:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		60-րդ կետը հստակեցման կարիք ունի, քանի որ դրամական միջոցի և դրամական միջոցի փոխարկվող այլ գործիքի տեսքով նվերները հանրային ծառայողը կարող է ստանալ, օրինակ, ընտանիքի անդամի, ազգականի, ընկերների կողմից, և դրանք որևէ առնչություն չունենան իր պաշտոնեական և մասնագիտական գործունեության հետ: Պետք է հստակեցվի, որ խոսքը գնում է իր	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		պաշտոնական պարտականությունների հետ կապված նվերների մասին: Նույնը վերաբերում է 61-րդ կետին:		
		72-րդ կետում անհրաժեշտ է ավելացնել «բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերը: Մասնավորապես, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն գործատուն պարտավոր է պայմաններ տրամադրել արհեստակցական միությանը կանոնադրությամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման համար: Բացի այդ, Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների արդեն ներկայացված օրենսդրական նախագծում նախատեսվում է սահմանել դրույթ, որով աշխատողների ներկայացուցիչներին գործատուն պետք է տրամադրի տարածք և նյութատեխնիկական միջոցներ:	Չի ընդունվել	«Արհեստակցական մմիության մասին» օրենքի 24-րդ հոդվածը վերաբերում է գործատուի կողմից արհեստակցական միությանը տրամադվող անհրաժեշտ պայմաններին՝ արհեստակցական միության կանոնադրությամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման համար, այլ ոչ՝ հանրային ծառայողի կողմից իր ծառայողական գործունեության համար տրամադրված գույքի՝ միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար օգտագործմանը:
		81-րդ կետի դրույթները հարկավոր է հստակեցնել, քանի որ դրանք սուբյեկտիվ ընկալման տեղիք են տալիս և դրանով սահմանափակում են հանրային ծառայողի ազատ խոսքի և ինքնաարտահայտման հիմնարար իրավունքը:	Չի ընդունվել	Սույն կանոնը չի սահմանափակում ազատ խոսքի հիմնարար իրավունքը, այլ վերաբերում է միայն այն դեպքերին, երբ արատավորվում է հանրային ծառայության հեղինակությունը: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		82-րդ կետի վերաբերյալ. հանրային ծառայողները, ինչպես նաև այլ աշխատողներ իրավունք ունեն իրենց աշխատանքային և սոցիալ-տնտեսական շահերը ներկայացնելու նպատակով միավորվել արհեստակցական միություններում: Նրանք իրավունք ունեն նաև ընտրվել այդ արհմիությունների ղեկավար մարմիններում: Որպես արհմիության անդամ՝ իրենց իրավունքները հանրային ծառայողներն իրացնում են տարբեր եղանակներով: Այն դեպքում, երբ հանրային ծառայության մարմինը խոչընդոտում է այդ իրավունքների իրականացմանը, կամ հանրային ծառայողն ու հանրային ծառայության մարմինը կամ նրանց ղեկավարը համաձայնության չեն գալիս որևէ հարցի շուրջ, հասունանում է կոլեկտիվ աշխատանքային վեճ, որի լուծման ձևերը սահմանված են Աշխատանքային օրենսդրությամբ՝ ընդհուպ մինչև գործադուլ, որը հրապարակային գործողություն է: Եվ միայն արհմիությունն ու դրա անդամներն են որոշում՝ այդ լուծման ձևերը լինեն հրապարակային, թե ոչ, տեղեկությունները և քննադատությունները հրապարակվեն սոցցանցերում, թե ոչ: Այնպես որ, այս կետը սահմանափակում է հանրային ծառայողների սահմանադրական իրավունքը՝ ուղղված իրենց աշխատանքային, սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությանը: Բացի դրանից, հանրային իշխանության մարմնի գործառույթները,	Չի ընդունվել	Նորմը ուղղված չէ օրենքով սահմանված այլ իրավունքները կամ քննադատություններ անելու իրավունքը սահմանափակելուն: Սույն կանոնով սահմանափակվում են այն գործողությունները, որոնք արատավորում են հանրային ծառայության հեղինակությունը: Նորմը ոչ միայն չի հակասում Նախագծի 29-րդ կետին, այլ փոխլրացնում է դրան:

		որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը չքննադատելու մասին դրույթը հակասում է սույն կանոնների 29-րդ կետին, որտեղ սահմանված է, որ քննադատական մտահոգություններ արտահայտելիս պետք է լինել հարգալից: Այնպես որ, առաջարկում ենք 82-րդ կետը հանել:		
3.	**«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ**	Հստակեցնել կարգավորումների ձևակերպումները բոլոր բաժինների համար՝ տարընկալումներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է ի գիտություն	
		Նախագծի 90-րդ կետը վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով բարեվարքության հարցերով կազմակերպչի կամ էթիկայի հանձնաժողովի հետ, պատասխանել սույն կանոնների պատշաճ իրագործման հետ կապված հարցերին»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նվերների ընդունման արգելքին առնչվող կանոններում քննարկել ընտանիքի անդամներից բացի այլ անձանցից նվեր ընդունելու դեպքերում՝ անմիջական ղեկավարին այդ մասին տեղեկացնելու պարտավորության հարցը:	Չի ընդունվել	«Նվեր» եզրույթի սահմանումը տրված է ինչպես «Հանրային ծառայության մասին» օրենքում, այնպես էլ Նախագծում, ըստ որոնց՝ հանրային ծառայողը «նվեր» կարող է ստանալ միայն ծառայողական պարտականությունների կատարման շրջանակներում: Հետևապես, հանրային ծառայողի ընտանիքի անդամների կողմից նվերը չի հանդիսանում «նվեր»՝

				«Հանրային ծառայության մասին» օրենքի և Նախագծի իմաստով:
		Քննարկել նախագծի 14-րդ կետում «...կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի...» ձևակերպման վերաբերելիությունը, օրինակ՝ կրոնական կամ նմանատիպ խորհրդանիշների: Առաջարկվում է մեկնաբանություններում ամրագրել այլ խորհրդանիշների տարբերակները, կամ սահմանել «այլ» կատեգորիան:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
4.	«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ	Նախագծի 45,46,47-րդ կետերում քննարկել սեռական կողմնորոշման հիմքով խտրականության հարցը:	Չի ընդունվել	Խտրականության արգելքը սահմանված է Նախագծի 47-րդ կետում, որը համապատասխանեցված է Հայաստանի Հանրապետություն Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքի կարգավորումներին:
		Մասնավորապես, 47-րդ կետում, ի թիվս այլ հիմքերի, ավելացնել սեռական կողմնորոշման հանգամանքը:	Չի ընդունվել	Խտրականության արգելքը սահմանված է Նախագծի 47-րդ կետում, որը համապատասխանեցված է Հայաստանի Հանրապետություն Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքի կարգավորումներին:
		Նախագծի 72-րդ կետի «...գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար» ձևակերպման մեջ «խնայողաբար» բառը շեշտելու նպատակահարմարությանը անդրադառնալ մեկնաբանություններում:	Ընդունվել է	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

5.	«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոն	«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բաժնի 2-րդ կետում՝ փաստաթղթի նպատակների շարքում, 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված նպատակները բովանդակային իմաստով իրար կրկնում են: Նույն տրամաբանությամբ միմյանց են կրկնում նաև 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված նպատակները: Անհրաժեշտ է նշել, որ «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները»՝ համաձայն հանրային ծառայության մասին օրենքի հոդված 28-ի 7-րդ մասի պահանջների, պետք է օժանդակի հանրային ծառայության առանձին տեսակների առանձնահատկություններով պայմանավորված ծառայողների վարքագծի կանոնագրքերի նախագծերի մշակմանը: Ինչ վերաբերում է 5-րդ ենթակետով սահմանված «5) երաշխավորել վարքագծի սկզբունքների կիրառման միասնականությունը» նպատակին, ապա պետք է նշել, որ վարքագծի սկզբունքներից բխող տիպային կանոնների միասնականությունը պետք է կառուցվի հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների մեկնաբանությունների հիման վրա (փաստաթուղթը ներկայումս բացակայում է), որի պատրաստումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԿՀ) օրենսդրական պարտականությունն է: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ •Խմբագրել վարքագծի տիպային կանոնների նպատակները,	Չի ընդունվել	Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետը վերաբերում է հանրային ծառայողի բարեվարք վարքագծին առհասարակ՝ ինչպես ծառայողական պարտականությունները կատարելիս, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս: Մինչդեռ նույն կետի 2-րդ կետը վերաբերում է հանրային ծառայողների բարեվարք գործելու պահանջին՝ պարտականությունները կատարելիս: Չեն նույնանում նաև նույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի բովանդակությունները: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծի 5-րդ կետի համաձայն՝ տիպային կանոններն ընկած են հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքում և հիմք են հանդիսանում հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար: Տվյալ պահանջը

		•որպես նպատակ սահմանել նաև «հանրային ծառայության առանձին ոլորտների ծառայողների վարքագծի կանոնագրքերի նախագծերի մշակման» դրույթը, •սույն փաստաթղթին կից հաստատել նաև հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների մեկնաբանությունները:		սահմանված է տիպային կանոնների նպատակներից առանձին՝ այլ դրույթով:
		Նույն բաժնի 5-րդ կետում նշվում է, որ «տիպային կանոնները հիմք են հանդիսանում... համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար»: «Համանման կանոններ» և փակագծում կանոնագրքերի մշակումը, արդյո՞ք ենթադրում է ոլորտային կանոնագրքերի մշակում նույն կանոններով և նմանատիպ կառուցվածքով: Մեր կարծիքով՝ ոչ: Վարքագծի կանոնագրքի կառուցվածքը պետք է սահմանվի դրա կազմման ուղեցույցով, որը ԿԿՀ-ի մասին ՀՀ օրենքի հոդված 24-ի պահանջն է. «24) ԿԿՀ-ն մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը»: Վերջինս նույնպես դեռ չի պատրաստվել, և դրա առկայությունը կարևոր է հստակ պատկերացում կազմելու համար, թե ինչպիսին է լինելու հանրային ծառայողի վարքագծի կանոնագրքի նախագծի կառուցվածքը, և թե ոլորտային առանձնահատկությունները որքանով են ազդելու վարքագծի տիպային կանոնների	Չի ընդունվել	Տիպային կանոնները հիմք են ոլորտային կանոնագրքերի մշակման համար կանոնների՝ իբրև իրավական նորմերի, բովանդակային առումով: Կանոնագրքերի կառուցվածքը, իհարկե, պիտի սահմանվի ուղեցույցով: Սակայն հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները հանրային ծառայողների վարքագծի այն նվազագույն պահանջներն են, որոնք պիտի ընկած լինեն Կանոնագրքերում ամրագրված ոլորտային կանոնների բովանդակությունների հիմքում: Ինչ վերաբերում է Ուղեցույցին, փաստաթուղթը կազմման փուլում է: Նախատեսվում է այն ընդունել տիպային կանոնները հաստատելուց հետո:

		միասնական կիրառման վրա: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ •սույն փաստաթղթին կից հաստատել նաև հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը:		
		Նույն բաժնի 6-րդ կետում տրվում է հանրային ծառայողների տիպային կանոնների սահմանումը՝ «...հանրային ծառայողների ծառայողական էթիկայի և ծառայողական վարքագծի ընդհանուր սկզբունքների, նորմերի և կանոնների ամբողջություն, որով պետք է առաջնորդվեն հանրային ծառայողները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից»: Ներկայացված սահմանման մեջ անհրաժեշտ է հստակություն մտցնել «ծառայողական էթիկա» և «ծառայողական վարքագիծ» եզրույթներում: Տիպային կանոնների այլ բաժիններում ծառայողական էթիկա եզրույթը չի կիրառվում և հիմնական հասկացությունների 11-րդ կետում դրա մասին չի խոսվում: Բացի այդ, «հանրային ծառայողները պետք է առաջնորդվեն տիպային կանոններով» դրույթը չի բխում վարքագծի տիպային կանոնների նպատակներից, քանի որ ըստ հանրային ծառայության մասին օրենքի հոդված 28- ի 7-րդ մասի պահանջների՝ այն պետք է հիմք հանդիսանա ոլորտային վարքագծի կանոնագրքերի նախագծերի մշակման համար, որով էլ պետք է	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը, այդ թվում նաև՝ «ծառայողական էթիկա» և «ծառայողական վարքագիծ» սկզբունքները կմանրամասնվեն հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում: Միաժամանակ, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հանրային ծառայողների վարքագծի այն նվազագույն պահանջներն են, որոնք պիտի ընկած լինեն Կանոնագրքերում ամրագրված ոլորտային կանոնների բովանդակությունների հիմքում և հիմնական օրինակ հանդիսանան հնարային ծառայողների համար:

		առաջնորդվեն համապատասխան ոլորտի հանրային ծառայողները: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • հստակեցնել «ծառայողական էթիկա» և «ծառայողական վարքագիծ» եզրույթները, • խմբագրել տիպային կանոնների 6-րդ կետը, այն հաշվով, որ հանրային ծառայողները առաջնորդվեն իրենց ոլորտային վարքագծի կանոնագրքերով, որոնք կմշակվեն տիպային կանոնների հիման վրա:		
		Նույն բաժնի 8, 9 և 10-րդ կետերով տրված են տիպային կանոնների պարտադիր և խրախուսելի բաղադրիչների սահմանումները: Նախ, անհասկանալի է վարքագծի տիպային կանոններում «պարտադիր» և «խրախուսելի» վարքագծի կանոնների տարանջատումը՝ չընդգծելով դրանց տարբերակման պահանջները: Բացի այդ, անհասկանալի է նաև օրինակ, թե ինչու գործընկեր հանրային ծառայողի կարողությունների զարգացմանը օգնելու մասով վարքագծի կանոնը համընդհանուր կիրառելիություն չպետք է ունենա: Հանրային ծառայության մասին օրենքը հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման համար նախատեսում է կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման պահանջ: Արդյո՞ք ԿԿՀ-ը իր որոշմամբ կարող է բացառել օրենքով սահմանված վարքագծի կանոնների մասով կարգապահական	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները նպատակ են հետապնդում օրինակելի վարքագծի այնպիսի սկզբունքային նորմեր սահմանելու, որոնց հետևելը կբխի հանրային ծառայողի ընդհանուր բարեվարքությունից և բարեխղճությունից: Խրախուսելի կանոններին հետևելը կվկայի հանրային ծառայողի՝ վարքագծի սկզբունքներին առավելագույնս հետևելու հանգամանքի մասին: Խրախուսելի կանոններն առավել ընդհանրական և հայեցողական բնույթ են կրում՝ ի տարբերություն վարքագծի պարտադիր կանոնների: Միաժամանակ, տիպային կանոններն ընկած են լինելու հանրային ծառայողների վարքագծի կանոնների

		պատասխանատվության միջոցներ չկիրառելու դրույթներ: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • Հստակեցնել, թե ինչ են նշանակում պարտադիր և խրախուսելի վարքագծի կանոնները և ինչ պահանջների կամ չափորոշիչների պետք է բավարարեն դրանք, • վերանայել հանրային ծառայողների տիպային կանոնների մասով խրախուսելի և պարտադիր կանոնների տարանջատման գործիքի կիրառումը, • «Հանրային ծառայողների խրախուսելի վարքագծի կանոններ» բաժնում ներառված բոլոր կանոնները տարալուծել տիպային կանոնների մյուս բաժիններում, • Խրախուսելի պարտադիր վարքագծի կանոնների մասին դրույթները շարադրել «հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի»-ում, • Նույն ուղեցույցում ներառել նաև «IV. ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ» բաժնի դրույթները:		միասնական համակարգի հիմքում և որ դրանք հիմք են հանդիսանում հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար, ամրագրված է Նախագծի այլ դրույթներում: Հանրային ծառայողների կողմից տիպային կանոնների երկու բաղադրիչների՝ խրախուսելի և պարտադիր կանոնների հիման վրա ընդունված կանոնների խախտումների համար պատասխանատվության վերաբերյալ դրույթները ենթակա են սահմանման հանրային իշխանության առանձին մարմինների կողմից ծառայության առանձին տեսակներին վերաբերող կանոններում (կանոնագրքերում):
		«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ» բաժնի 12-րդ կետում տրված են վարքագծի կանոնների ձևավորման	Ընդունվել է մասամբ	Նախագծի 3-րդ կետում թվարկված են հանրային ծառայողի վարքագծի սկզբունքները, որոնք բխում են

		«բաղադրիչները»: Հանրային ծառայության մասին օրենքը պահանջում է, որ վարքագծի կանոնները բխեն վարքագծի սկզբունքներից: Անհասկանալի է՝ արդյո՞ք նշված բաղադրիչները հանդիսանում են հանրային ծառայության մասին օրենքով սահմանված վարքագծի սկզբունքների բաղադրիչները, թե՞ դրանք վարքագծի կանոնների ձևավորման այլ շրջանակներն են: Եթե դրանք վարքագծի սկզբունքներից բխող բաղադրիչներն են, ապա, օրինակ, որպես հավատարմությունը հանրային շահին սկզբունքի բաղադրիչ՝ օրենքը ճանաչում է նաև «հանրային քաղաքականության կենսագործման գործընթացում հանրային ծառայողների կողմից հավատարմությունը և հուսալիությունը՝ անկախ համոզմունքից և դիրքորոշումից»: Մինչդեռ այս բաղադրիչը 12-րդ կետում ներկայացված է ուղղակիորեն վարքագծի սկզբունքի տեսքով: Բացի այդ, վարքագծի սկզբունքներից բաղադրիչների ցանկում բացակայում է «հանրությանը ծառայելու գիտակցումը» սկզբունքը, իսկ թվարկված բաղադրիչներից՝ թափանցիկությունը և հաշվետվողականությունը հանրային ծառայության հիմնական սկզբունքներից են, որը սահմանված է հանրային ծառայության մասին օրենքի 12-րդ հոդվածով, որը բացակայում է հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների ցանկից: Նույնը		«Հանրային ծառայության մասին» օրենքի տրամաբանությունից և ամբողջությամբ համընկնում են դրա կարգավորումներին: Միաժամանակ, Նախագծի կառուցվածքային տրամաբանությունը փոփոխվել է և վարքագծի տիպային կանոնների բաղադրիչ հանդիսացող պարտադիր կանոնները տարանջատվել են և դասավորվել՝ ըստ այն վարքագծի սկզբունքների, որոնց շրջանակներում տեղավորվում են: Միաժամանակ, «բարեխղճություն և հավատարմություն հանրային շահի նկատմամբ» վարքագծի կանոնը չի տարանջատվել բաղադրիչների, քանի որ և՛ բարեխղճությունը, և՛ հանրային շահը վերաբերում են հանրային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում դրսևորած վարքագծին և փոխլրացնում են միմյանց:

		վերաբերում է օրինականության սկզբունքին, որը նույնպես ճանաչված է որպես հանրային ծառայության գործունեության սկզբունք՝ «իրավունքի գերակայությունը» ձևակերպմամբ: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • հստակեցնել վարքագծի տիպային կանոնների ձևավորման բաղադրիչների շրջանակը՝ ձերբազատվելով հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներից չբխող բաղադրիչներից, • բաղադրիչների ցանկից հանել «թափանցիկության և հաշվետվողականության», «օրինականության» բաղադրիչները, իսկ դրանց ներքո ձևավորած կանոնները տեղափոխել այլ բաղադրիչների ներքո, • տարանջատել «բարեխղճություն» և «հավատարմությունը հանրային շահին» սկզբունք բաղադրիչները, • հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները բխեցնել վարքագծի սկզբունքների մեկնաբանություններից և դրանց տարածման շրջանակից կամ էլ այդ սկզբունքների կարգավորման բաղադրիչներից:		
		«ՆՎԵՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԸ» բաժնի 59-րդ կետում նշվում է, որ հանրային ծառայողը «պարտավոր է զերծ մնալ իր գործառույթներն ու պարտականությունները իրականացնելու համար պետական բյուջեից բացի այլ աղբյուրից	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		վարձատրություն ստանալու» կանոնը: Այստեղ անհասկանալի է, թե ինչ կապ ունի այս կանոնը նվեր ստանալու արգելքի հետ. չէ՞ որ հանրային ծառայողի գործառույթների իրականացման կամ պարտականությունների կատարման համար օրենսդրորեն սահմանված է վարձատրություն և պարգևատրման համակարգ: Հանրային ծառայողի համար այլ աղբյուրից վարձատրություն ստանալը նույնպես կանոնակարգված է հանրային ծառայության մասին օրենքով, որով թույլատրվում է գիտական, ստեղծագործական և կրթական գործունեությունից վճարումները, սակայն դրանք չեն կարող բխել հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների կատարումից: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • 59-րդ կետում նշված կանոնը վերախմբագրել կամ տեղափոխել այլ բաժին կամ հանել:		
		Նույն բաժնի 60-րդ կետում հանրային ծառայողին արգելվում է նվեր ընդունել « ... որևէ նվեր դրամական միջոցի, կամ դրամական միջոցի փոխարկվող այլ գործիքի տեսքով (օրինակ՝ նվեր քարտեր, վիրտուալ տարադրամներ, բանկային մուրհակներ, ճամփորդական չեկեր և այլն», մինչդեռ հանրային ծառայության մասին օրենքի տրամաբանությամբ հանրային ծառայողը պետք է զերծ մնա այն նվերները ընդունելուց, որոնք կարող են ազդել պաշտոնեական պարտականությունների կատարման վրա:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		Անհասկանալի է նաև թե ինչու է կանոնը միայն մասնավորեցված դրամական միջոցների տարատեսակ դրսևորումների համար, եթե հանրային ծառայության մասին օրենքը սահմանում է, որ արգելվում է նվեր ընդունել կամ համաձայնություն տալ այն ընդունելու, եթե այն «ողջամըտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի» հանգամանքը: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • 60-րդ կետում նշված կանոնը համապատասխանեցնել հանրային ծառայության մասին օրենքով սահմանված «նվեր» հասկացության պահանջներին:		
		«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» բաժնում բացակայում է հանրային ծառայողի կողմից՝ որպես պետության ներկայացուցիչ գույքային գործարքների կնքումը և ոչ ծառայողական նպատակներով կուսակցությունների, այլ ՀԿ-ների, կրոնական կազմակերպությունների համար պետական կամ համայնքային գույքի օգտագործումը սահմանափակումների վերաբերյալ կանոնները: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • վերոնշյալ բաժինը համալրել «որպես պետության ներկայացուցիչ գույքային գործարքների կնքման» և «ոչ ծառայողական նպատակներով կուսակցությունների, այլ ՀԿ-ների, կրոնական կազմակերպությունների համար	Չի ընդունվել	Հանրային ծառայողի՝ որպես պետական ներկայացուցչի կողմից գույքային գործարքների կնքմանն ուղղված հարաբերությունները ենթակա են կարգավորման այլ իրավական ակտերում և չեն առնչվում հանրային ծառայողի վարքագծի կանոններին: Միաժամանակ, հարկ է նշել, որ ոչ ծառայողական նպատակներով հանրային ռեսուրսների օգտագործման սահմանափակումները մանրամասնորեն կարգավորված են Նախագծի այլ դրույթներում:

		պետական կամ համայնքային գույքի օգտագործումը» սահմանափակող կանոններ:		
		«ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՎ» բաժնում, 81-84-րդ կետերում սահմանված կանոնները մասնակիորեն կրկնում են 65-րդ կետի՝ քաղաքական կուսակցությունների մասով կանոնը: Նույն կերպ կրկնվում է խտրական վերաբերմունքի կանոնը, սոցիալական ցանցերի մասով: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ փորձ է արվում հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների միջոցով սոցիալական ցանցերում «լռեցնել» հանրային ծառայողներին՝ որպես մասնավոր անձ և անձնական տարածքում գործունեությունը: Խիստ մտահոգիչ են այս բաժնի կանոնների ձևակերպումները, որոնք միանշանակ մեկնաբանելը դժվար է և հիմք են հանդիսանալու յուրաքանչյուր դեպքում որպես «մահակ» օգտագործել սոցիալական ցանցերում ակտիվ հանրային ծառայողներից ազատվելու համար: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • քննարկել սոցիալական հարթակներում որպես մասնավոր անձ՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնների տարածման շրջանակը՝ հիմնական թիրախներ ընդունելով քաղաքական զսպվածությունը և չեզոքությունը, ինչպես նաև տվյալ մարմնի կողմից տարվող	Չի ընդունվել	Նախագծի 65-րդ կետը վերաբերում է հանրային ծառայողների՝ բացառապես քաղաքական զսպվածությունն ապահովելու նպատակով սահմանափակումների ամրագրմանը, մինչդեռ Նախագծի 81-84-րդ կետերն առավել լընդհանրական բնույթ են կրում: Հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում 83-րդ կետը հանվել է Նախագծից: Միևնույն ժամանակ, 81-84-րդ կետերն ամենևին միտված չեն հանրային ծառայողներին սոցիալական ցանցերում «լռեցնելուն»: Դրանց նպատակը բացառապես հանրային իշխանության այն մարմիններին, որտեղ իրենց ծառայողական պարտականություններն են կատարում հանրային ծառայողները, վարկաբեկելը թույլ չտալն է: Նշված կետերից յուրաքանչյուրում հստակորեն նշված են սահմանափակումների ուղղություններն ու նպատակները, որոնցից ակնհայտ է դառնում, որ դրանք ունեն ուղղակի և օրինական ուղղվածություն և չեն սահմանում

		քաղաքականության դեմ հրապարակային քարոզչությունը, որը կարող է վերածվել քաղաքական գործունեության: Հանրային ծառայողի այլ գործունեությունը, որը չի կարող մեկնաբանվել կամ ձևակերպվել որպես քաղաքական ազդեցության կամ իշխանությունների հետ անհամաձայնություն, պետք է անտեսվի և ճանաչվի «խոհանոցային խոսակցություններ»:		արգելքներ՝ այլ ոլորտների առնչությամբ սոցիալական ցանցերում հրապարակումներ կատարելու: Վարքագծի տիպային կանոններն ուղղված են ոչ միայն ծառայողական պարտականությունները կատարելիս, այև այդ պարտականություններից դուրս հանրային ծառայողների բարեկրթության կանոնների սահմանմանը՝ հաշվի առնելով, որ հանրային ծառայողներն իրենց վարքագծով պետք է օրինակ ծառայեն այլ անձանց:
		«ՎԱՐՔԱԳԻԾԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁ» բաժնում 85-րդ կետի կանոնը, ընդհանուր առմամբ, կրկնում է 83 և 84-րդ կետերում շարադրված կանոնների բովանդակությունը: Նույն բաժնի 86-րդ կետում նշված կանոնը՝ «Հանրային ծառայողը պարտավոր է չօգտագործել զբաղեցրած պաշտոնը իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար» չի վերաբերում հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձ կարգավիճակին, այն աշխատում է որպես պաշտոնատար անձի կարգավիճակում գործողության կատարում, ինչը կարող է հանգեցնել պաշտոնական դիրքի չարաշահման: Նույն բաժնի 87-րդ կետում	Չի ընդունվել	Նախագծի 85-րդ կետը վերաբերում է ծառայողական պարտականություններից դուրս՝ որպես մասնավոր անձ, հանրային ծառայողի կողմից հանրային ծառայությունը վարկաբեկելուց կամ նսեմացնելուց խուսափելու պարտականությանը: Մինչդեռ Նախագծի 83—րդ և 84-րդ կետերն առավել կոնկրետացված ու հատուկ են և վերաբերում են սոցիալական ցանցերում հանրային ծառայողի վարքագծին: Հետևաբար, դրանք իմաստային առումով որոշակի

		ներկայացված «արգելվում է մասնավոր կյանքում հանրային ծառայողի և նրա վերադասի միջև մասնավոր ֆինանսական գործարքների կատարումը, այդ թվում՝ փոխառություններ տրամադրելը, մեկ այլ ծառայողի համար երաշխիք տրամադրելը, ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի համար երաշխավոր հանդիսանալը» կանոնը կիրարկման տեսանկյունից չի կարող գործել, քանի որ հանրային ծառայողին ներկայացվող արգելքներն ու սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով: Ընդհանուր առմամբ, վարքագծի տիպային կանոններում բացակայում են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների (բացառությամբ՝ հետաշխատանքային) պահպանման վերաբերյալ հանրային ծառայողների կողմից դրսևորվող վարքագծի մասին դրույթները: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • վերաշարադրել «վարքագիծը որպես մասնավոր անձ» բաժնի տիպային կանոնները՝ այն հաշվով, որպեսզի նվազագույնի հասցվի կրկնությունները, • 86-րդ կետում նշված կանոնը տեղափոխել վարքագծի կանոնների այլ բաժին՝ օրինակ, նվերների ընդունման արգելքի ներքո, • 87-րդ կետում նշված արգելքը սահմանել օրենքով, իսկ հանրային ծառայողի վարքագծի		նմանություններ ունեն, սակայն չեն նույնանում: Ինչ վերաբերում է Նախագծի 86-րդ կետի վերաբերյալ առաջարկին, ապա այն չի ընդունվել, քանի որ դրույթը վերաբերում է ծառայողական պարտականություններից դուրս՝ այլ իրավիճակներում որևէ եղանակով իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար զբաղեցրած պաշտոնն օգտագործելու արգելքին: Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ մանրամասն կարգավորումներ պարունակում է «Հանրային ծառայութնա մասին» օրենքը, այդ իսկ պատճառով դրանց վերաբերյալ որոշակի կարգավորումներ են ներառվել վարքագծի տիպային կանոններում, սակայն ոչ բովանդակային դրույթներ:

		տիպային կանոններում ներառել նշված արգելքի պահպանման մասով վարքագիծը բնորոշող կանոնը, • վարքագծի տիպային կանոններում ներառել հանրային ծառայողի անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների (բացառությամբ՝՝ հետաշխատանքային) պահպանման վարքագծի վերաբերյալ դրույթները:		
		«ԿԱՆՈՆՆԵՐ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ» բաժնում, պարզ չէ, թե 88-95-րդ կետերում շարադրված վարքագծի տիպային կանոնները որքանով են վերաբերելի հանրային ծառայությունում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց: Հանրային ծառայության մասին օրենքը սահմանում է հանրային ծառայողի «վերադաս անձ կամ անմիջական ղեկավար» եզրույթը: Մինչդեռ, սույն բաժնում կիրառվում է «հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ» եզրույթը: Այստեղից անհասկանալի է՝ հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ» եզրույթը ներառում է միայն հանրային ծառայողների ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, թե՞ ընդգրկում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող բոլոր խմբերի պաշտոնատար անձանց: Եթե նկատի ունենանք, որ միայն քաղաքացիական ծառայության մասին օրենքն է տարանջատում ղեկավար և մասնագիտական	Ընդունվել է մասամբ	Նախագիծը լրացվել է «հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք» հիմնական հասկացությամբ:

		պաշտոնների խմբեր, իսկ հանրային ծառայության մյուս տեսակները տարանջատում են բարձրագույն, գլխավոր և առաջատար խմբերում, ապա անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել, թե նշված բաժնի վարքագծի տիպային կանոնները ո՞ւմ են հասցեագրված: Բացի այդ, անհասկանալի է՝ շարադրված տիպային կանոնները տվյալ մարմնի ղեկավարի կամ հանրային ծառայողի անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձի պարտականություններն են, թե՞ նրանց լիազորությունները վերոնշյալ կանոնների պահպանման ու կիրառման գործում: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է՝ • Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների «հասկացություններ» բաժնում սահմանել ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակը, • Խմբագրել սույն բաժնի անվանումը՝ շարադրելով «հանրային ծառայողների վերադաս անձ և անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնյաների պարտականությունների շրջանակը», և այն սահմանել հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցում:		

6.	Փաստաբանների պալատ	Ենթաօրենսդրական ակտի շրջանակում սահմանել ծառայողական քննությունների եզրակացությունները ԿԿՀ ներկայացնելու պարտավորություն:	Չի ընդունվել	Նման կարգավորման և պարտականության սահմանումը դուրս է Նախագծի տրամաբանության շրջանակներից: Նախագիծը վերաբերում է հնարային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանմանը:
		Էթիկայի հանձնաժողովի կազմում ԿԿՀ-ի կողմից ներկայացուցիչ ունենալու հարց:	Չի ընդունվել	Նման կարգավորման սահմանումը դուրս է Նախագծի տրամաբանության շրջանակներից: Նախագիծը վերաբերում է հնարային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանմանը:
		7-րդ կետի վերաբերյալ՝ առաջարկվում է տարանջատել այն կանոնները, որոնց պահպանման պահանջը ուղղակիորեն չի առնչվում ծառայողական պարտականությունների կատարմանը: Վարքագծի կանոն եզրույթը նույն 7-րդ կետի համատեքստում է:	Չի ընդունվել	Նախագծում առանձնացված է բաժին՝ «Հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի վարքագիծը» վերտառությամբ, որը բովանդակում է ծառայողական պարտականություններից դուրս հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոններին: Միաժամանակ, Նախագծում առկա որոշակի դրույթներ
		Հաշվի առնելով, որ «հանրային շահ» եզրույթը բխում է Սահմանադրությունից, որպես իրավաչափության տեսանկյունից արդարացված նպատակ, առաջարկվում է նշված հասկացությունում «հետագա զարգացման» բառից հետո լրացնել նաև «կամ այլոց	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-

		հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության» բառերը՝ ձևակերպումը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով:		1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:
		«Խտրականություն» եզրույթը սահմանել հասկացություններում: Իրավական ակտում լրացուցիչ կրկնություններից խուսափելու համար նպատակահարմար է որոշ հասկացությունների նկարագրության դեպքում օգտագործել ուղղակի հղում համապատասխան օրենսդրական ակտին:	Չի ընդունվել	«Խտրականություն» եզրույթը, Նախագծում կատարված փոփոխությունների արդյունքում, Նախագծում կիրառվում է ոչ հաճախ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը, «խտրականության»՝ հանրաճանաչ հասկացություն լինելու

				փաստը, ինչպես նաև Նախագծի՝ «Օբյեկտիվություն և խտրականության բացառում» գլխում խտրականության դրսևորման ձևերի մանրամասն ներկայացումը, հարկ չենք համարում հիմնական հասկացություններում եզրույթը մեկնաբանելու:
		14-րդ կետում լրացնել «իր ծառայողական պարտականությունները կատարելիս»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Որպես հանրային ծառայությունում օրինականության սկզբունքի ամրապնդման բաղկացուցիչ մաս՝ նախատեսել նաև Սահմանադրությամբ և օրենքի խախտմամբ տրված հանձնարարականների չկատարման վերաբերյալ դրույթ:	Չի ընդունվել	Հանրային ծառայողներին հանձնարարականներ տալու սահմանափակումների վերաբերյալ դրույթները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածով:
		20-րդ կետում, հաշվի առնելով հասկացություններ բաժնում հանրային շահին վերաբերող առաջարկությունները, նպատակահարմար է նաև «ու հանրային շահին» բառերը փոխարինել «հանրային շահին ու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		27-րդ կետում ավելացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ակնհայտորեն ուղղված չեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կամ հանրային շահի պաշտպանության կամ տվյալ պետական մարմնի	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		իրավունքների պաշտպանության և/կամ դրա գործառույթների իրականացման ապահովմանը»:		
		28-րդ կետի մասով առաջարկվում է սահմանել նաև հնարավորություն ԿԿՀ-ի կողմից նշված կանոնների պաշտոնական մեկնաբանման վերաբերյալ:	Չի ընդունվել	Նման կարգավորման և պարտականության սահմանումը դուրս է Նախագծի տրամաբանության շրջանակներից: Միաժամանակ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, օրենսդրական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, սահմանվելու են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններ:
		31-րդ կետում լրացնել «ինչպես նաև դրանց ներկայացուցիչների» բառերը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հանրային ծառայողի համար նախատեսված շփումների շրջանակը:	Չի ընդունվել	«Հանրային իշխանության մարմիններ» եզրույթն անձնավորված բնույթ չի կրում և ներառում է դրանց ներկայացուցիչներին:
		Առաջարկվում է միավորել 37-ր և 39-րդ կետերը մեկ կետի շրջանակում:	Չի ընդունվել	Քննարկվող կետերն ունեն տարաբնույթ բովանդակություն, հետևաբար դրանց միավորումը նպատակահարմար չէ:
		40-րդ կետում նախատեսել նաև խտրականության արգելքի վերաբերյալ կարգավորում:	Չի ընդունվել	Խտրականության արգելքի վերաբերյալ կարգավորումները ներառված են «օբյեկտիվություն և խտրականության բացառում» բաժնում:
		42-րդ կետում սահմանել պատշաճ վիճակով աշխատանքի ներկայանալու ընդհանուր պահանջ՝	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		հաշվի առնելով, որ նշված հարցը առավելապես ենթակա է կարգավորման տվյալ մարմնի ներքին կարգապահական կանոններով:		
		Վարքագծի կանոնների 43-րդ և 44-րդ կետերով նախատեսված կանոնները դուրս են ակտի կարգավորման առարկայի շրջանակից և կարգավորվում են այլ իրավական ակտերով:	Չի ընդունվել	Դրույթներն առավել մանրամասն ենթակա են ներառման հանրային ծառայողի վարքագծի կանոններում՝ կոնկրետացնելու համար այլ իրավական ակտերով ընդհանրական սահմանված նորմերը:
		54-րդ կետում նախատեսել նաև երաշխիք չտալու հնարավորություն այն դեպքերում, երբ որոշման կայացումը կամ գործի ընթացքը ուղղակիորեն կախված չէ հանրային ծառայողի կամքից:	Չի ընդունվել	Առաջարկում բովանդակվող դրույթն անորոշ է: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկվող դրույթը վերաբերում է երաշխավորություններ տալու իրավասություն անձի կողմից ՈՉ ՕԲՅԵԿՏԻՎ երաշխավորություններ տալուն, ինչպես նաև դրույթով սահմանված այլ գործողություններ կատարելուն:
		Առաջարկվում է 55-րդ կետը հանել, քանի որ դուրս է ակտի կարգավորման շրջանակից:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը տեղափոխվել է և ենթարկվել որոշակի խմբագրումների:
		58-րդ կետում հստակ չէ լիազորությունների պատշաճ իրականացման գնահատումը՝ ում կողմից է իրականացվելու: Անհրաժեշտ է պարզաբանել:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		59-րդ կետը վիճահարույց է: Առաջարկվում է այս բաժնից հանել:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		62-րդ կետը համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1 հոդվածին:	Ընդունվել է	Դրույթը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին՝ պատրականությունները կատարելու ընթացքում, ուստի կարգավորումը պետք է լինի առավել խիստ: «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1 հոդվածը սահմանում է ցանկացած պարագայում միայն «քաղաքական զսպվածության» դրսևորումը: Սակայն, միաժամանակ, նույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացքով բնութագրվող, քաղաքական **չեզոքություն** և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է:
		69-րդ կետը իրավական ակտի կարգավորման շրջանակից դուրս է: Կարգավորված է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով:	Չի ընդունվել	Դրույթն առավել մանրամասնորեն ենթակա է ներառման հանրային ծառայողի վարքագծի կանոններում՝ կոնկրետացնելու համար այլ իրավական ակտերով ընդհանրական սահմանված նորմերը: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		71-րդ կետ՝ նշված եզրակացությունը չի կարող չհրապարակվել, քանի որ այն պարունալում է կամ կարող է պարունակել պարզաբանումներ վարքագծի կանոնների վերաբերյալ. և անձը չի կարող ուղղակիորեն հղում չկատարել այնպիսի ակտին կամ փաստաթղթին որը վերաբերում է իրեն:	Չի ընդունվել	Դրույթի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ կանոնը վերաբերում է այն անձանց, որոնց հասանելի են դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված այլ անձանց բարեվարքության վերաբերյալ տվյալները: Հանձնաժողովը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, դրանց վերաբերյալ հարցադրումները չպետք է իրականացվեն նշված եզրակացությանը հղում կատարելով կամ ուղղակիորեն վերարտադրելով Հանձնաժողովի դիտարկումները: Նշվածը բացարձակ չի նշանակում, որ եզրակացության վերաբերյալ հարցադրումներ չպետք է կատարվեն, այլ, ընդհակառակը, դրանք անհրաժեշտ է իրականացնել հնարավորին ճկուն կերպով՝ առանց Հանձնաժողովի կարծիքն ուղղակիորեն շարադրելու:
		Հասկացություններում տալ «լիազոր մարմին», «իրավասու մարմին» սահմանումը:	Չի ընդունվել	Յուրաքանչյուր պարագայում «լիազոր մարմին» և «իրավասու մարմին»

				եզրույթները վերաբերում են առանձին հարաբերության, հետևաբար դրանց սահմանումը հիմնական հասկացություններում տալ հնարավոր չէ: Միաժամանակ, առանձին դրույթները կմանրամասնվեն հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		75-րդ կետում որպես սուբյեկտ առաջարկվում է նախատեսել նաև ԿԿՀ-ին: Առաջարկվում է նախատեսել նաև կարգավորում հաղորդման հիմնավորման և ապացույցների ներկայացման վերաբերյալ:	Չի ընդունվել	Նման կարգավորման և պարտականության սահմանումը դուրս է Նախագծի տրամաբանության շրջանակներից և ենթակա է սահմանման օրենսդրական մակարդակում:
		76-րդ կետը լրացնել «ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնաբերված խախտումների դեպքերի վերաբերյալ»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		87-րդ կետը խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ որևէ օրենքով չկա նախատեսված սահմանափակում: Նման կանոնի կիրարկման արդյունքում ըստ էության սահմանափակվում է քաղաքացիաիրավական հարաբերություններում ազատ գործելու հնարավորությունը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Վերադասության կարգով բողոքարկումը անարդյունավետ է: Ծառայողական քննությունների	Չի ընդունվել	Առաջարկը խիստ անորոշ է և դուրս է հանրային ծառայողի վարքագծի

		մասով առաջարկում է այնպիսի մեխանիզմ ներդնել որ դատական բողոքարկումը հնարավորինս կրճատվի:		տիպային կանոնների սահմանման շրջանակից:
		59-րդ կետը քննարկել հեղինակային իրավունքի համատեքստում:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
7.	Կրթական, գիտական շրջանակի ներկայացուցիչներ	Նախագծի 42-րդ կետով սահմանված՝ հանրային ծառայողների արտաքին տեսքի, մասնավորապես՝ հագուստի վերաբերյալ հստակ ուղենիշներ սահմանել:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները հիմք են հանդիսանալու հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար: Հանրային իշխանության առանձին մարմիններ հնարավորություն կունենան հանրային ծառայողների արտաքին տեսքի վերաբերյալ կանոններ սահմանելու՝ հիմք ընդունելով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների դրույթները:
		Քննարկել նաև աշխատավայրում գտնվելիս անվանաքարտ կրելու պահանջի սահմանում, հատկապես քաղաքացիների հետ ուղղակի շփման մեջ գտնվող ծառայողների համար:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները հիմք են հանդիսանալու հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման

				և սահմանման համար: Հանրային իշխանության առանձին մարմիններ հնարավորություն կունենան հանրային ծառայողների կողմիցաշխատավայրում գտնվելիս անվանաքարտ կրելու պահանջ սահմանելու՝ հիմք ընդունելով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների դրույթները և չհակասելով դրանց:
		Նախագծի 11-րդ կետի 7-րդ ենթակետը ձևակերպել հետևյալ կերպ. Ոտնձգություն և բռնություն՝ ոտնձգությունը խոսքային, մարմնի կամ ժեստերի լեզվի միջոցով արտահայտված կամ որևէ այլ վարքագիծ, որը ստեղծում է ահաբեկող, վիրավորական, նվաստացնող կամ թշնամական մթնոլորտ: Բռնությունը՝ֆիզիկական կամ հոգեբանական ագրեսիա, ահաբելում, վիրավորանք, սպառնալիք:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծում առկա «սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի կարգավորումներին:
		42-րդ կետ՝ լրացնել հետևյալ նախադասություններով՝ դրես կոդ և արտաքին տեսք. Հանրային ծառայողները պարտավոր են աշխատանքի ներկայանալ պատշաճ տեսքով, դասական կամ կիսադասական ոճի հագուստով (գրասենյակային ոճ): Արգելվում է աշխատանքային օրերին և ժամերին ներկայանալ տոնական զարդերով, տոնական վառ դիմահարդարմամբ, զգեստները չպետք է լինեն	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները հիմք են հանդիսանալու հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար: Հանրային

		թափանցող, լայն և գրգռիչ բացվածքներով, չկրել շատ կարճ զգեստներ, չներկայալանլ սպորտային հագուստով:		իշխանության առանձին մարմիններ հնարավորություն կունենան հանրային ծառայողների արտաքին տեսքի վերաբերյալ կանոններ սահմանելու՝ հիմք ընդունելով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների դրույթները:
		1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Կանոններ) բխում են «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված վարքագծի սկզբունքներից և հանդիսանում են հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարր:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		2-րդ կետ՝ շարադրել «Սույն կանոնների նպատակներն են»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		2-րդ կետի 1-ին ենթակետում գրել «պահպանել հանրային ծառայողների բարեվարքության պահանջները, ուղղորդել հանրային ծառայողին՝ դրսևորելու Կանոններին համապատասխան վարքագիծ:	Չի ընդունվել	Առաջարկում ներառված դրույթն արդեն իսկ բովանդային առումով ներառված է 2-րդ կետի տարբեր ենթակետերում:
		4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում հանել «Տիպային» բառը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		8-րդ կետը շարադրել «Կանոններն ունեն պարտադիր և խրախուսական նշանակություն»:	Չի ընդունվել	Դրույթը վերաբերում է ոչ թե կանոնների ընդհանրական նշանակությանը, այլ նպատակ է հետապնդում բաժանելու

				կանոնները առանձին բաղադրիչների՝ պարտադիր և խրախուսելի:
		10-րդ կետում «Խրախուսելի» բառը փոխել «խրախուսական»:	Չի ընդունվել	Նախագծի նախորդող դրույթների համաձայն՝ տիպային կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչներ: Հետևապես, քննարկվող դրույթում փոփոխություն կատարելու կարիք չկա:
		11-րդ կետում «փաստաթղթում» բառը փոխել «Կանոններում»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		11-րդ կետի 1-ին ենթակետը հանել, քանի որ սահմանված է «Հանրային ծառայության մասին օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով:	Չի ընդունվել	«Նվեր» հասկացությունը հանդիսանում է տվյալ Նախագծի էական բաղկացուցիչ մաս և ներառվել է Նախագծում՝ որոշակիությունը և պարզությունը հնարավորինս ապահովելու համար:
		Հասկացություններում սահմանել պարտադիր և խրախուսական կանոնների եզրույթները:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի կանոնների պարտադիր և խրախուսելի բաղադրիչների վերաբերյալ Նախագծում առկա են առանձին դրույթները՝ համապատասխանաբար 10-րդ և 11-րդ կետերը:
		11-րդ կետի 6-րդ ենթակետը հանել, քանի որ սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով:	Չի ընդունվել	Որոշ դրույթներ ենթակա են մանրամասն սահմանման Նախագծում՝ առավելագույն որոշակիություն ապահովելու նպատակով:

		Տալ «Էթիկա» եզրույթի սահմանում, քանի որ գործածվում է 2-րդ կետի 2-րդ ենթակետում, 6-րդ կետում, 11-րդ կետի 4-րդ ենթակետում:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում կատարվել են որոշակի փոփոխություններ և «էթիկա» եզրույթն առանձին իմաստով առկա է միայն Նախագծի 6-րդ կետում: Նշված դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում բովանդակությամբ համասեռ կետերը կարող են միավորվել գլուխներում:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում Նախագծի կառուցվածքային տրամաբանությունը փոփոխվել է:
		«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		12-րդ կետում «բաղադրիչներից» բառը փոխել «սկզբունքներից»:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներն առավել լայն և ընդգրկուն ինստիտուտ է, քան վարքագծի կանոնները: Վերջիններս սույն Նախագծով սահմանվում են հենց վարքագծի սկզբունքների հիման վրա, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Հաշվի առնելով, որ «սկզբունքներ» եզրույթն այլ նշանակություն ունի,

				նպատակահարմար չէ «բաղադրիչներ» բառ փոխարինել «սկզբունքներ» բառով:
		12-րդ կետի 7-րդ ենթակետում «շահերի կառավարումը» գրել «շահերի բախման կառավարում»:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
		12-րդ կետի 10-րդ ենթակետում «չհրապարակված պաշտոնեական տեղեկատվություն» ձևակերպումը փոխել «պաշտոնեական (ծառայողական) տեղեկատվության կառավարում:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		12-րդ կետի 12-րդ ենթակետում «հաղորդում ներկայացնելը» փոխել «հաղորդման ներկայացում»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		12-րդ կետում լրացնել «Հանրությանը ծառայելու գիտակցումը, ազնվությունը»:	Չի ընդունվել	«Հանրային ծառայելու գիտակցումը» հանդիսանում է հանրային ծառայողներ վարքագծի սկզբունք, որի հիման վրա սահմանվում են վարքագծի առանձին կանոններ: Ինչ վերաբերում է «ազնվություն» հատկանիշին, ապա այն դրսևորված է այլ կանոններում՝ տարանջատված եղանակով:
		18-րդ կետում «Սահմանադրությունը» բառից հետո ավելացնել «սահմանադրական օրենքները»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Օրինականություն բաժնում ավելացնել «Ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու արհեստավարժությունը»:	Չի ընդունվել	Առաջարկում ներկայացված կարգավորումն առնչություն չունի օրինականության սկզբունքի էության հետ: Միաժամանակ, այն չի

				հանդիսանում հնարային ծառայողի վարքագծի կանոն:
		Բարեխճություն և հավատարմություն հանրային շահին բաժնում ավելացնել « Հետևողականորեն և պատշաճ կերպով մասնակցել կազմակերպվող ուսումնական ծրագրերին»:	Չի ընդունվել	Առաջարկում ներկայացված կարգավորումը ներառվում է Նախագծի «Բարեխղճություն և հավատարմություն հանրային շահի նկատմամբ» գլխի 22-րդ կետի տրամաբանության մեջ, ըստ որի՝ հանրային ծառայողը պարտավոր է ի պաշտոնե վերապահված լիազորությունների, կարողությունների և իրավասության շրջանակներում պարտականությունները կատարել նվիրվածությամբ և առավելագույն արդյունավետությամբ: Կազմակերպվող ուսումնական ծրագրերին հետևողականորեն և պատշաճ կերպով մասնակցելը հանրային ծառայողի կողմից իր պարտականությունների նվիրված և արդյունավետ կատարման բաղկացուցիչ մաս է հանդիսանում:
		37-րդ կետում «միջողներն» բառը գրել «միջոցներն»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		41-րդ կետում «ապառնալիք» բառը գրել «սպառնալիք»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		43-րդ կետում «աշխատանքի ներկայանալը» փոխարինել «աշխատավայրում գտնվելը»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		47-րդ կետում «սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելու, գույքային վիճակի, ծննդյան, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական և սոցիալական հանգամանքներից» ձևակերպումը փոխել հետևյալ կերպ «սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Անաչառություն, օբյեկտիվություն և խտրականության բացառում բաժնում ավելացնել «Հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք չունի կրելու կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշաններ:	Չի ընդունվել	Նախագծի «Քաղաքական չեզություն և քաղաքական զսպվածություն» գլխում սահմանված են հանրային ծառայողի վարքագծին ներկայացվող տիպային պահանջները՝ քաղաքական զսպվածությունն ու չեզոքությունն ապահովելու նպատակով: Ծառայողական պարտականությունները կատարելիս հանրային ծառայողի կողմից կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշան կրելն ինքնին կվկայի նշյալ վարքագծի կանոնների խախտման մասին:

				Բացի դրանից, առանձին դրույթով արգելք է սահմանված, ըստ որի՝ հանրային ծառայողը պարտավոր է հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ չցուցադրել:
		50-րդ կետում «փորխկապակցված» բառը գրել «փոխկապակցված»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		57-րդ կետում հստակեցել «սոցիալապես ընդունելի սահմաններում» ձևակերպումը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		69-րդ կետում «տեսագրել» բառը գրել «չտեսագրել»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		96-րդ կետում «հետևիլ» բառը գրել «հետևի», «փորձիլ» բառը՝ «փորձի»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		102-րդ կետում անհասկանալի է «վարքագիծ ցուցաբերելուց խուսափելու համար» ձևակերպումը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		«Տիպային կանոնների դրույթները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը» գլուխը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Նախագծի 105-րդ կետի ձևակեպումներից հասկանալի չէ, թե խրախուսելի կանոնների պահպանման/չպահպանման դեպքում դրանց բացահայտման մեխանիզմներն ինչպիսին են: Անհրաժեշտ է մեկնաբանություններում բացատրել այս կանոնների նպատակը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի 58-րդ կետում որոշակի դրույթներ թողնվել են հանրային ծառայողի ընկալմանը, ինչը պատասխանատվության կիրառման տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել:	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
8.	Գործարար ոլորտի ներկայացուցիչներ	Կանոնների պահպանման գնահատման կարգը հստակեցման կարիք ունի, որոնք են այդ մեխանիզմները:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծից հանվել են տիպային կանոնների խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքներին վերաբերող դրույթները: Համապատասխան իրավական հետևանքները ենթակա են սահմանման տիպային կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության առանձին մարմինների կողմից հանրային ծառայություն առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում): Հետևաբար, կանոնների պահպանման մեխանիզմները ևս կբխեն առանձին կանոններով (կանոնագրքերով) սահմանված կանոններից և

				համապատասխան իրավական ակտերում կիստկեցվեն իրավական հետևանքներին վերաբերող կարգավորումները:
		Վարքագծի կանոնների տեղայնացման հաստատումը ինչպե՞ս է իրականացվելու:	Ընդունվել է ի գիտություն	Տե՛ս նախորդող առաջարկի հիմնավորումը:
		Առաջարկվում է նվերների արգելքը ձևակերպելիս սահմանել, թե ինչպիսի նվերներ են թույլատրելի: Իմպերատիվ արգելքը նպատակահարմար չէ: Պետք է հստակ ձևակերպել թույլատրելի նվերների շրջանակը, այդ թվում՝ հյուրասիրությունը:	Չի ընդունվել	Նվերների թույլատրելի կամ ոչ թույլատրելի լինելու հանգամանքին վերաբերող կարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որին էլ հղում է տրվում Նախագծի վերաբերելի դրույթներում:
		Խախտումների վերաբերյալ տեղեկատվություն հայտնելու հատվածը անորոշ է ձևակերպված: Կարիք կա ստեղծելու անկախ մարմին, որը գործընթացը կկառավարի, ինչպես նաև ներդնել այնպիսի համակարգ, որով հնարավոր կլինի պահպանել դիմումատուի անանուն մնալը (անոնիմությունը): Դա կարող է իրականացվել նաև թեժ գծի միջոցով:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կարգավորման շրջանակից դուրս է այն գործողությունների սահմանումը, որոնք ուղղված են լինելու գործընթացի կառավարմանը: Նման կարգավորումները ենթակա են սահմանման օրենսդրական մակարդակում:
		Հանրային ծառայողների իրազեկվածությունը ապահովել էլեկտրոնային վերապատրաստումների միջոցով: Վերապատրաստման դասընթացի	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կարգավորման շրջանակից դուրս է այն գործողությունների սահմանումը, որոնք

		անցկացումը լինի կատարողականի գնահատման մաս:		ուղղված են լինելու գործընթացի կառավարմանը: Նման կարգավորումները ենթակա են սահմանման օրենսդրական մակարդակում կամ հանրային իշխանության առանձին մարմինների ներքին իրավական ակտերում:
		Քաղաքական չեզոքության սահմանը դնելը խնդրահարույց է:	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հաստիքային միավոր է (...): Հանրային ծառայողի՝ քաղաքական չեզոքությանն առընչվող կարգավորումները բխում են վերոնշյալ հիմնական դրույթից, ինչպես նաև նույն օրենքով սահմանված՝ հանրային ծառայողների քաղաքական գործունեության սահմանափակումների տրամաբանությունից:
		Նախագծի 16-րդ կետում նշված է «Հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ... հանրային ծառայողի անկողմնակալության, անաչառության, և	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց»: Նման վարքագիծ դրսևորելը զուտ անձի սուբյեկտիվ ընկալումն է կատարվածի վերաբերյալ և անձնական մոտեցումը տվյալ հարցի կարգավորման շուրջ: Հասկանալի չէ, թե արդյոք նման պայմաններում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի բազմակարծության իրավունքի դրսևորումը ինչպես է կայանալու:		
		Նախագծի 25-րդ կետում նշված է «Հանրային ծառայողը պարտավոր է ... բացահայտել և հնարավորինս վերացնել իր և այլ անձանց կողմից թույլ տված սխալները, շփոթմունք առաջացնող հարցերը և բացթողումները»: Նման պնդումը հակասում է գործող օրենսդրության պահանջներին, քանի որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: <u>Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Ավելին, այլ անձանց կողմից թույլ տրված սխալներն ուղղելու պարտավորություն չի կարող դրվել այդ արարքը չկատարած անձի վրա:</u>	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. նոր խմբագրման համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է հնարավոր ջանքեր ներդնելու, որպեսզի վերացնի ոչ թե այլ անձանց, այլ այլ հանրային ծառայողների կողմից թույլ տրված սխալները:
		Նախագծի 25-րդ կետում նշված է «Հանրային ծառայողը պարտավոր է կիրառել իրավասու մարմինների կողմից ընդունված քաղաքականությունները, ուղեցույցներն ու որոշումները՝ անկախ անձնական համոզմունքներից	Ընդունվել է	Քննարկվող դրույթին հաջորդող դրույթը ենթարկվել է խմբագրման, որի արդյունքում սահմանվել է, որ հանրային ծառայողը պարտավոր է անհրաժեշտության դեպքում

		և մոտեցումներից...»: Մինչդեռ, Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտականություններով սահմանված շրջանակները: Այս պարագայում խախտվում են հանրային ծառայողի Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները: ՀՀ Սահմանադրության նորմերը գերակա են և գործում են անմիջականորեն, իսկ մայր օրենքին հակասող բոլոր նորմատիվ իրավական ակտերն առ ոչինչ են, պարտադիր բնույթ չեն կարող ունենալ և կիրառելի չեն:		մասնագիտական առարկություններ և առաջարկություններ ներկայացնել նախատեսվող պարտադիր կատարման ենթակա և վերաբերելի քաղաքականությունների, ուղեցույցերի, որոշումների և կազմակերպահրավական բնույթի այլ ակտերի վերաբերյալ՝ նախքան դրանց ընդունումը, իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ակնհայտորեն ուղղված չեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կամ հանրային շահի պաշտպանության կամ տվյալ պետական մարմնի իրավունքների պաշտպանության և /կամ դրա գործառույթների իրականացման ապահովմանը:
		Նախագծի 28-րդ կետում նշված է, որ «Հանրային ծառայողը պարտավոր է վարքագծի կանոնների դրսևորման հետ կապված մասնագիտական խարհրդատվության համար դիմել <u>բարեվարքության հարցերով կազմակերպչին</u>: Մինչդեռ, վերջինիս գործունեության վերաբերյալ պահանջվող չափորոշիչներ չեն ներկայացվել:	Չի ընդունվել	Բարեվարքության հարցերով կազմակերպչի գործունեության վերաբերյալ դրույթները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքում:

		Նախագծի 42-րդ կետում նշված է, որ «Հանրային ծառայողը պարտավոր է աշխատանքի ներկայանալ գրասենյակային ոճի հագուստով, պահպանել հագուստ կրելու վերաբերյալ՝ տվյալ մարմնի կողմից սահմանված կանոնները»: Հաշվի առնելով ներկա սոցիալական ծանր վիճակը, աշխատողի համար հատուկ ոճի հագուստ ձեռք բերելու պարտականությունը պետք է կրի գործատուն, ոչ թե լրացուցիչ ֆինանսական բեռ դրվի աշխատողի վրա: Բացի դա, պետք է հաշվի առնել հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները (օրինակ՝ քաղաքացիական ծառայող, համայնքային ծառայող, հատուկ ծառայություն և այլն) աշխատանքային պայմանները և սոցիալական պահանջմունքները: Ինչպես ցույց է տվել պրակտիկ փորձը, գրասենյակային ոճի հագուստ կրելը ոչ միշտ է նպատակահարմար, կախված աշխատանքի բնույթից, գործառույթներից և պահանջմունքներից:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. «գրասենյակային ոճի հագուստով» եզրույթը փոխարինվել է «պատշաճ տեսքով» արտահայտությամբ:
		Նախագծի «Շահերի կառավարում» գլխի բովանդակությունից պարզ չէ, թե ինչպես կարող է հստակեցվել հանրային ծառայողների շրջանում միասնական ընկալումը շահերի բախման վերաբերյալ: Հետևում է, որ պետք է շահերի բախումը սահմանել որպես հանրային ծառայության հետ անհամատեղելի իրավիճակ, որում առկա է հնարավոր կամ իրական անհամատեղելիություն	Չի ընդունվել	Շահերի բախման վերաբերյալ մանրամասն կարգավորումները, ինչպես նաև շահերի բախման հասկացությունն ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքում:

		հանրային ծառայողի պարտականությունների և նրա մասնավոր շահերի միջև, որն ազդում է նրա գործունեության վրա կամ ողջամիտ կասկած է հարուցում դրա օրինականության առնչությամբ: Հետևաբար, շահերի կառավարման համար անհրաժեշտ է սահմանել շահերի բախման կարգավորման և կառավարման իրավակարգավորման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև՝ հանրային ծառայողների (օրինակ՝ համայնքային ծառայողների և քաղաքացիական ծառայողների) վերապատրաստման ծրագրերում (դասընթացներում) պարտադիր ներառել շահերի բախման դասընթացներ:		
		Նախագծի «Կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների վերաբերյալ հաղորդում ներկայացնելը» գլխի 76-րդ կետում նշված է. « Հանրային ծառայողը պարտավոր է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել իր կողմից թույլ տրված, ինչպես նաև՝ իր վերադասի կամ անմիջական ղեկավարի կողմից կատարված առերևույթ խախտումների վերաբերյալ: Հիշյալ դրույթը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսդրության դրույթներին և Համայնքային ծառայության մասին գործող օրենսդրությամբ	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը խմբագրվել է. կանոնը գործում է որպես ինքնուրույն նորմ՝ առանց հղում պարունակելու «Ազդարարման համակարգի մասին» օրենքին, և, միաժամանակ, չի հակասում օրենսդրությանը:

		սահմանված ծառայողական քննության անցկացման կարգին:		
9.	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ (UNDP)	2-րդ մասի 2-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. «Նպաստել հանրային ծառայողի կողմից էթիկայի բացառիկ վարքագծի դրսևորման, ինչպես պաշտոնեական/ ծառայողական լիազորություններն իրականացնելիս, այնպես էլ պաշտոնեական/ ծառայողական լիազորություններից դուրս:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը միացվել են:
		2-րդ մասի 4-րդ կետը առաջարկվում է խմբագրել, քանի որ միտքը միանշանակ չի ընկալվում:	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		12-րդ մասի 5-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ. «Բարեկրթությունը և արհեստավարժությունը»:«Հանրային ծառայության մասին» օրենքով արհեստավարժությունը սահմանված է որպես սկզբունք:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներն առավել լայն և ընդգրկուն ինստիտուտ է, քան վարքագծի կանոնները: Վերջիններս սույն Նախագծով սահմանվում են հենց վարքագծի սկզբունքների հիման վրա, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով:
		12-րդ մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «Հանրային ռեսուրսների նպատակային, արդյունավետ և խնայողաբար»: Տնտեսավարության սկզբունքը նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթների մասին» օրենքով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և լրացվել «բարեխիղճ» բառով:
		15-րդ մասում ավելացնել «յուրաքանչյուրի անհատականությունը»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		24-րդ մասում ավելացնել «կասկածի տակ դնել հանրային իշխանության ազնիվ, անկողմնակալ և արդյունավետ լինելու վերաբերյալ ձևավորված համոզմունքը»:	Չի ընդունվել	Դրույթը ձևակերպված է հնարավորինս սպառիչ եղանակով: Երրորդ անձանց կողմից ձևավորված համոզմունքը չի կարող դրվել դրույթի հիմքում, քանի որ վերացական երևույթ է:
		32-րդ մասում ավելացնել «Չթաքցնել հանրայնացման ենթակա տվյալների/ տեղեկատվության տրամադրումը:	Չի ընդունվել	Առաջարկվող կարգավորման բովանդակությունը չի համապատասխանում հանրային ծառայողի վարքագծի կանոնների բովանդակությանը և դուրս է սույն Նախագծով սահմանվող կանոնների շրջանակից:
		38-րդ մասում ավելացնել «զերծ մնալ պաշտոն զբաղեցնող այլ անձի/ ծառայողի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ դնելուց»:	Չի ընդունվել	Առաջարկվող կարգավորումն ընդգրկվում է քննարկվող դրույթի վերջին մասի տարամաբանության մեջ, մասնավորապես՝ «հանրային ծառայողը պարտավոր է գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը»:
		45-րդ մասում «չհարուցվի» բառից հետո ավելացնել «կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ բաժնում ավելացնել նոր կանոն «Եթե հնարավոր չէ ինքնուրույն որոշել՝ արդյոք նվերի ընդունմամբ խախտվում է դրա ընդունման օրենսդրական արգելքը, ապա հանրային	Չի ընդունվել	Գործընթացային կարգավորումները ենթակա են սահմանման օրենսդրական մակարդակում: Նվերների վերաբերյալ մանրամասն կարգավորումներ

		ծառայողն այդ հարցով խորհրդատվություն ստանալու նպատակով դիմում է իր վերադասին/ անմիջական ղեկավարին, կամ բարեվարքության հարցերով կազմակերպչին: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձն այդ հարցով մասնագիտական խորհդրատվություն ստանալու նպատակով կարող է գրավոր դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:		բովանդակում է «Հանրային ծառայության մասին» օրենքը:
		65-րդ մասից հանել «սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց» հատվածը:	Չի ընդունվել	Առաջարկը ներկայացված է առանց հիմնավորումների, հետևաբար ընդունելի չէ:
		ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ բաժնում ավելացնել նոր կետ «Հանրային ծառայողը պարտավոր է անձնական տվյալները, ծառայողական, խորհրդապահական տեղեկատվությունն օգտագործել բացառապես թույլատրելի/ իրավաչափ նպատակներով կամ թույլ չտալ դրանց օգտագործումն իր կամ այլոց անձնական/ մասնավոր շահերի համար»:	Չի ընդունվել	Առաջարկում ներկայացված դրույթը բովանդակային առումով ներառվում է համապատասխան գլխում ներառված այլ դրույթներում:
		81-րդ և 82-րդ մասերը առաջարկվում է հանել:		Առաջարկը ներկայացված է առանց հիմնավորումների, հետևաբար ընդունելի չէ: